# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 281 - Գ - 111

**Տեղեկատվական ծառայությունների մատուցման մասին**

«12» հոկտեմբերի 2014 թ.

ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ**

Իրավաբանական անձի անվանումը

Գևորգ Հովսեփի 26

փաստաթղթի գործունեության հասցեն

ի դեմս Գևորգ Հովսեփի Մարգարյան Գեղարքունի (հետագայում՝ Պատվիրատու) և

պաշտոն, անուն, ազգանուն

**«ՍՓՅՈՒՌ» ՍՊԸ-ն (Երևան, Կիևյան 19, 6-րդ հարկ), ի դեմս կոմերցիոն ներկայացուցիչ Էդուարդ Գրիգորյան**

**(Լիազորագիր № 281 ) (հետագայում՝ Կատարող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.**

## 1. Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրով Կատարողը մատուցում է պայմանագրի հավելված 1-ում Պատվիրատուի կողմից ընտրված տեղեկատվական ծառայություններ, իսկ Պատվիրատուն վճարում է այդ ծառայությունների դիմաց:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2. Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի հավելված 1-ում ընտրված տեղեկատվական փաթեթին համապատասխան տրամադրել Կատարողին իր (կամ իր հետ փոխկապակցված կազմակերպության) (հետագայում՝ Կազմակերպություն) վերաբերյալ տեղեկություններ (հետագայում՝ Տեղեկություններ)՝ ներկայացված սույն պայմանագրի հավելված 2-ում:

2.2 Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Հավելված 2-ում ներկայացված Տեղեկությունների հավաստիության և գործող օրենսդրությանը համապատասխան լինելու համար:

2.3 Կատարողը պարտավորվում է Տեղեկությունները, ըստ իր կողմից մշակված խմբագրական նորմերի, մուտքագրել խմբագրել, դասակարգել, թարգմանել (ներկայացնել 3 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն) և ներառել «Սփյուռի» տեղեկատվական միջոցներում սույն պայմանագրի կետ 2.4-ում նշված ժամկետներում, բացառությամբ «Սփյուռի» դասակարգչում բացակայող դասի առաջարկի, որի մշակման և ներառման համար կպահանջվի ևս երկու շաբաթ:

2.4 Կատարողը պարտավորվում է Տեղեկությունները մշակելուց հետո ընդգրկել դրանք հետևյալ տեղեկատվական միջոցներում.

2.4.1 «Սփյուռի» հեռախոսային տեղեկատուում (113, 519999)՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում: Կատարողը պարտավորվում է Կազմակերպության վերաբերյալ տեղեկություններ տրամադրել բոլոր այն զանգահարողներին, որոնց հարցումը վերաբերում է Տեղեկություններում լրացված հետևյալ տվյալներին՝ անվանում, ապրանքներ/ծառայություններ «Սփյուռի» դասակարգչով, ապրանքանիշ, ղեկավար, հասցե, աշխատանքային օրեր և ժամեր, հիմնադրման տարեթիվ, կազմակերպաիրավական ձև: Եթե հարցմանը բավարարում են նաև «Սփյուռ-ռեգիստրում» գրանցված այլ կազմակերպություններ, ապա հարցումը սպասարկվում է կազմակերպությունների որոշակի հերթականությամբ, որն ամեն օր, բացի կիրակի օրերից, փոխվում է հերթափոխային սկզբունքով:

2.4.2 www.spyur.am վեբ-կայքում՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո երկու շաբաթվա ընթացքում: Կատարողը պարտավորվում է վեբ-կայքում Տեղեկությունները ներկայացնել համաձայն Հավելված 2-ում լրացված/պատվիրված ծավալի: Ընդ որում, Կատարողը վեբ-կայքում հատկացնում է երեք տեղեկատվական վեբ-էջ (հայերեն, ռուսերեն, անգլերեն)՝ անհատական վեբ-հասցեի տրամադրմամբ, և ապահովում է Տեղեկությունների հասանելիությունը վեբ-կայքի բոլոր այցելուների, ինչպես նաև ինտերնետային որոնողական համակարգերի համար:

2.4.3 «Հայաստանի Դեղին էջեր» բջջային Android, iOS անվճար հավելվածներում՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո երկու շաբաթվա ընթացքում: Կատարողը պարտավորվում է բջջային հավելվածներում Կազմակերպության մասին տեղեկությունները ներկայացնել հետևյալ ծավալով՝ անվանում, հեռախոսահամար, գործունեության տեսակ «Սփյուռի» դասակարգչով (Հավելված 2-ում վերոնշյալ տվյալների լրացված լինելու դեպքում):

2.4.4 «Հիմնական» կամ «Սեղմ» փաթեթի ընտրման դեպքում (նշվում է Հավելված 1-ում) Կատարողը պարտավորվում է Տեղեկությունները ընդգրկել նաև սույն պայմանագրի ժամկետի ընթացքում հրատարակվող «Հայաստանի Դեղին էջեր» տեղեկագրքի և «Հայաստանի Գործարար տեղեկատու, Հայաստանի Դեղին էջեր» PC-հրատարակման (համակարգչային տարբերակ) թողարկումներում: Կատարողը պարտավորվում է նշված թողարկումներում Կազմակերպության մասին տեղեկությունները ներկայացնել հետևյալ ծավալով՝ անվանում, լոգոտիպ, ղեկավար, հասցե, հեռախոսահամար, էլ. փոստ, վեբ-կայք, ընդհանուր գործունեություն, գործունեության տեսակ «Սփյուռի» դասակարգչով, ապրանքանիշ, կազմակերպաիրավական ձև (Հավելված 2-ում վերոնշյալ տվյալների լրացված/պատվիրված լինելու դեպքում): Կատարողը պարտավորվում է ապահովել տեղեկագրքի տարածումը և մեկական օրինակի առաքումը Պատվիրատուին, ինչպես նաև PC-հրատարակման անվճար բեռնման հնարավորությունը www.spyur.am կայքից:

2.5 Տեղեկություններում առկա որևէ տվյալի փոփոխման (իրականությանը չհամապատասխանելու) դեպքում Պատվիրատուն պարտավոր է այդ մասին անմիջապես գրավոր տեղեկացնել Կատարողին:

2.6 Պատվիրատուն պարտավորվում է անհրաժեշտության դեպքում (Կատարողի պահանջով) Կատարողին տրամադրել Տեղեկություններում առկա տվյալի ճշգրտությունը հաստատող փաստաթուղթ: Տասնօրյա ժամկետում պահանջվող փաստաթուղթը չտրամադրելու դեպքում Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն հանել այդ տվյալը Տեղեկություններից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին:

2.7 Պատվիրատուն իրավունք ունի Տեղեկություններում կատարել փոփոխություններ, ինչպես Կատարողի կողմից ամեն վեց ամիսը մեկ անցկացվող Տեղեկությունների ճշգրտումների ժամանակ, այնպես էլ արտահերթ կարգով:

2.8 Կատարողը պարտավորվում է Տեղեկությունների փոփոխությունները մշակել և ընդգրկել տեղեկատվական միջոցներում սույն պայմանագրի 2.3 և 2.4 կետերում նշված ժամկետներում, իսկ «Հիմնական» կամ «Սեղմ» փաթեթի ընտրման դեպքում փոփոխությունները կներառվեն առաջիկա թողարկվող տեղեկագրքում և PC-հրատարակման մեջ, եթե փոփոխությունները Կատարողին են ներկայացվել. տեղեկագրքի դեպքում՝ հրատարակման, իսկ PC-հրատարակման դեպքում՝ թողարկման հանձնելուց առնվազն տասն օր առաջ:

2.9 Պայմանագրի գործողության ընթացքում, եթե Պատվիրատուն Տեղեկություններում ավելացնում է տվյալ կամ պատվիրում է լրացուցիչ ծառայություն, որը նախատեսված չէ սույն պայմանագրով, կամ, եթե Պատվիրատուն Տեղեկություններում փոփոխում է կազմակերպության անվանումը, ապա Պատվիրատուի և Կատարողի միջև պետք է կնքվի «Պայմանագրի լրացում», որում նշված ծառայությունների դիմաց Պատվիրատուն պետք է կատարի համապատասխան վճարում: «Պայմանագրի լրացումը» կհամարվի սույն պայմանագրի անբաժանելի մասը և պայմանագիրը կշարունակի գործել նույն ժամկետներում:

2.10 Կատարողն իրավունք ունի Տեղեկություններում ներկայացված կազմակերպությանը (կազմակերպության ղեկավարին) ուղարկել գործարար նորություններ պարունակող էլեկտրոնային նամակներ և sms հաղորդագրություններ:

## 3. Կողմերի պատասխանատվությունը

3.1 Պատվիրատուն իրավունք ունի հետ պահանջել վճարված գումարն այն մասով, որով Կատարողն իր պարտավորությունները չի կատարել:

3.2 Պատվիրատուի մեղքով ծագած պայմանագրային որևէ պարտավորություն Կատարողի կողմից կատարման անհնարինության դեպքում Պատվիրատուն վճարում է լրիվ ծավալով:

3.3 Կողմերի կամքից անկախ ծագած պայմանագրի կատարման անհնարինության ծագման դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է փաստացի կատարած ծառայությունների դիմաց:

## 4. Պայմանագրի ժամկետը և գինը

4.1 Սույն պայմանագիրը գործում է «10» 10 2014 թ.-ից մինչև «10» 10 2019 թ.:

4.2 Պայմանագրի գինը և նրա հաշվարկը ներկայացված է սույն պայմանագրի հավելված 1-ում:

4.3 Պատվիրատուն պարտավորվում է պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի գումարը:

## 5. Այլ դրույթներ

5.1 Պատվիրատուն իրավունք ունի վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, գրավոր տեղեկացնելով այդ մասին Կատարողին՝ վճարելով փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

5.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում, Կատարողն իրավունք ունի վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, գրավոր տեղեկացնելով այդ մասին Պատվիրատուին, և պահանջել վերջինից կատարել վճարում՝ փաստացի մատուցած ծառայությունների մասով, ինչպես նաև պահանջել վճարել տույժ՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար վճարվելիք գումարի 0.1 տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրի ժամկետի ավարտին Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին տրամադրել մատուցված ծառայությունների մասին հաշվետվություն, «Սփյուռի» հեռախոսային տեղեկատուով և Spyur.am կայքի միջոցով կատարված հարցումների վիճակագրություն, հարկային հաշիվ և ներկայացնել նոր պայմանագրի կնքման առաջարկ:

5.4 Սույն պայմանագրի ժամկետի ավարտից հետո 15 օրվա ընթացքում, եթե որևէ կողմ մյուս կողմին գրավոր չի հայտնում մատուցվող ծառայությունների դադարեցման մասին, ապա պայմանագիրը երկարացվում է նույն պայմաններով անորոշ ժամկետով և «Պատվիրատուն» պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ նույն պայմաններով:

5.5 Սույն պայմանագրի հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասերը:

5.6 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

5.7 Սույն պայմանագրով չկարգավորվող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

5.8 Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից (ներառյալ հավելվածները)՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

## 6. Լրացուցիչ պայմաններ

Վերոնշյալ կետերում նշված 1) 30.11.2014-63000դրամ
2) 30.10.2015-63000դրամ, 3) 30.10.2016-63000դրամ
4) 30.10.2017-63000դրամ, 5) 30.10.2018-63000դրամ.

| «Պատվիրատու» | «Կատարող» |
|---|---|
| ՀՎՀՀ 01540062 | ՀՎՀՀ 01801068 |
| Կ.Տ. | Կ.Տ. |
| | Էդուարդ Գրիգորյան |
| անուն, ազգանուն | անուն, ազգանուն |
| | կոմերցիոն ներկայացուցիչ |
| պաշտոն | պաշտոն |
| ստորագրություն | ստորագրություն |

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

Պայմանագիր՝ 281.9-111 «12» 11 2019 թ.

*Կատարող՝* «ՍՓՅՈՒՌ» ՍՊԸ, 0033, Երևան, Կիևյան 19, 6-րդ հարկ ՀՎՀՀ՝ 01801068
հ/հ՝ 1570001101200100 «Ամերիաբանկ» ՓԲԸ

*Պատվիրատու՝* Հայաստանի Հանրապետության Փոխարկ

իրավաբանական անձի անվանումը

| Ծառայության անվանումը | Ծառ.-յան ընտրում | Միավորի գինը (դրամ) | Ծառ. քանակ | Տարրերի քանակ | Գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| ☑ Փաթեթ «ՀԻՄՆԱԿԱՆ» ☐ Փաթեթ «ՀԻՄՆԱԿԱՆ-ՕՆԼԱՅՆ» ☐ Փաթեթ «ՍԵՂՄ» ☐ Փաթեթ «ՍԵՂՄ-ՕՆԼԱՅՆ» | ☑ | 48000 | – | 5 | 240000 |
| *Հավելում փաթեթին.* | | | | | |
| Լոգոտիպ | ☑ | 15000 | – | տարրերի քանակ | 75000 |
| Ղեկավար | ☐ | | | տարրերի քանակ | |
| Հասցե | ☐ | | | տարրերի քանակ | |
| Հեռախոս | ☐ | | | տարրերի քանակ | |
| Ֆաքս | ☐ | | | տարրերի քանակ | |
| Էլ. փոստ | ☐ | | | տարրերի քանակ | |
| Վեբ-կայք | ☐ | | | տարրերի քանակ | |
| Առաջարկներ ԳՏ դասակարգչով (5 դաս) | ☐ | | | տարրերի քանակ | |
| Ապրանքատեսակ | ☐ | | | տարրերի քանակ | |
| Ապրանքատեսակի նկար | ☐ | | | տարրերի քանակ | |
| Գործ. տեսակ ԴԷ դասակարգչով | ☐ | | | տարրերի քանակ | |
| Ընդհանուր գործունեություն (50 նիշ) | ☐ | | | տարրերի քանակ | |
| Ապրանքանիշ, գործընկեր | ☐ | | | տարրերի քանակ | |
| Ալտերնատիվ անվանում | ☐ | | | տարրերի քանակ | |
| Անվանման բանալի բառեր (50 նիշ) | ☐ | | | տարրերի քանակ | |
| Լրացուցիչ տեղեկություններ (50 նիշ) | ☐ | | | տարրերի քանակ | |
| Շրջանակ | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Շրջանակ՝ լոգոտիպով | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Ֆոտոշարք (9 նկար) | ☐ | | | տարրերի քանակ | |
| Տեսաշարք (1 վիդեո) | ☐ | | | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Բաց զետեղում | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Լոգոտիպ | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Անհատական վեբ-հասցե | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Վեբ-կայք հղումով | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Առաջարկի վեբ-հղում | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Այցեքարտ | ☐ | | | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Ֆոտոշարք (նկար) | ☐ | | | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Կատալոգ | ☐ | | | տարրերի քանակ | |
| Կոմպաս. Բաններ | ☐ | | | տարրերի քանակ | |
| Անվանման փոփոխում | ☐ | | | տարրերի քանակ | |
| Լոգոտիպի փոփոխում | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| Ֆոտոշարքի փոփոխում | ☐ | – | – | տարրերի քանակ | |
| | ☐ | | | տարրերի քանակ | |
| | ☐ | | | տարրերի քանակ | |
| | ☐ | | | տարրերի քանակ | |
| | | Պայմանագրի գինը (ներառյալ ԱԱՀ) | | | 315000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կ.Տ.

ստորագրություն

ՍՓՅՈՒՌ ՍՊԸ Երևան ք. Շահումյան թաղ. 6-րդ հարկ
„ՍՓՅՈՒՌ"
„СПЮРЪ"
„SPYUR"
01801068

ԿԱՏԱՐՈՂ

ստորագրություն

Ռեգ.№ 3445

# ՀԱՎԵԼՎԱԾ 2

Պայմանագիր 281-գ-111 «12» 11 2014 թ

| Փաթեթի անունը | Փաթեթի մեջ ներառված տվյալները | Հավելում փաթեթին. լրացուցիչ տվյալներ և ծառայություններ |
|---|---|---|
| • ՀԻՄՆԱԿԱՆ<br>• ՀԻՄՆԱԿԱՆ-ՕՆԼԱՅՆ | «Կազմակերպության անվանում» (անվանում, կազմակերպաիրավական ձև), «Ղեկավար»՝ 1, «Հասցե»՝ 1, «Հեռախոս»՝ մինչև 3, «Ֆաքս»՝ 1, «Էլ. փոստ»՝ 1, «Վեբ-կայք»՝ 1, «Վեբ-էջ spyur.am-ում», «Ապրանքներ/ծառայություններ «Գործարար տեղեկատու» (ԳՏ) դասակարգչով»՝ մինչև 30, «Ապրանքատեսակ»՝ մինչև 10, «Գործունեության տեսակ «Դեղին էջեր» (ԴԷ) դասակարգչով»՝ 1, «Ընդհանուր գործունեություն»՝ մինչև 50 նիշ, «Անվանման բանալի բառեր»՝ մինչև 50 նիշ, «Տարեկան շրջանառություն», «Սեփականության ձև», «Հիմնադրման տարեթիվ», «Աշխատակիցների քանակ», «Աշխ. օրեր», «Աշխ. ժամեր» | փաթեթով սահմանված քանակը գերազանցող տվյալներ, «Ապրանքանիշ», «Ալտերնատիվ անվանում», «Լրացուցիչ տեղեկություններ» տվյալներ, «Լոգոտիպ», «Տվյալների ընդգծում շրջանակով», «Ֆոտոշարք», «Տեսաշարք» և «Կոմպաս» ծառայություններ: |
| • ՍԵՂՄ<br>• ՍԵՂՄ-ՕՆԼԱՅՆ | «Կազմակերպության անվանում» (անվանում, կազմակերպաիրավական ձև), «Ղեկավար»՝ 1, «Հասցե»՝ 1, «Հեռախոս»՝ 1 (միայն հեռախոսահամար), «Վեբ-էջ spyur.am-ում», «Ապրանքներ/ծառայություններ ԳՏ դասակարգչով»՝ մինչև 3, «Գործունեության տեսակ ԴԷ դասակարգչով»՝ 1, «Սեփականության ձև», «Հիմնադրման տարեթիվ», «Աշխատակիցների քանակ», «Աշխ. օրեր», «Աշխ. ժամեր» | |

Կազմակերպության անվանումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերություն

ОБЩЕСТВЕННАЯ ТЕЛЕКОМПАНИЯ АРМЕНИИ закрытое акционерное общество

PUBLIC TV COMPANY OF ARMENIA Closed Joint-Stock Company

Սեփ. ձևը: պետ. ☑ ոչ պետ. ☐ մասնակի պետ. ☐ օտար. ☐ միջազգ. ☐

Աշխ. քանակը: < 16 ☐ 16-50 ☐ 51-250 ☐ 251-1000 ☑ >1000 ☐

Հիմն.տարի: 2001 Տար. շրջանառ.

Աշխ. օրերը:

| երկ | երք | չրք | հնգ | ուրբ | շաբ | կիր |
|---|---|---|---|---|---|---|
| + | + | + | + | + | + | + |

Աշխ.ժամերը -

Ղեկավար 1

Մարգարիտա Գրիգորյան, գործադիր տնօրեն

Маргарита Григорян, исполнительный директор

Margarita Grigoryan, Managing Director

Հասցե 1 Հեռախոսներ 2

Հասցե 1 Հայաստան, 0047, Երևան, Նորք, Գևորգ Հովսեփյան փող., 26 շենք (Նորք-Մարաշ վարչ. շրջան Երևանում)
*տեղեկագրքի առաքման հասցե*

Հեռախոս կոմուտատոր (374-10)650015
լուրերի բաժին (374-10)653751

| | | |
|---|---|---|
| Ֆաքս | 1 | (374-10)650523 |
| Էլ. փոստ | 1 | support@armtv.com |
| Վեբ-կայք | 2 | http://www.armtv.com<br>http://www.1tv.am |

Վեբ-էջ www.spyur.am-ում http://www.spyur.am/armtv

Անվանման բանալի բառեր 59 նիշ

*Ներկայացվում հեռ. ծառայությունում և վեբ-կայքում՝ անվանումով որոնմանը մասնակցելու համար*

ՀԱՅԼՈՒՐ, ԲԱՐԻ ԼՈՒՅՍ ՀԱՅԱՍՏԱՆ, Հ1, 1 ԹԻ ՎԻ ԷՅԷՄ, ԱՌԱՋԻՆ, ՄԵԿ / АЙЛУР, БАРИ ЛУЙС АЙАСТАН / Н1, 1TVAM

Գործունեության տեսակ «Դեղին էջեր» (ԴԷ) դասակարգչով 2

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ / КОМПАНИИ И НЕКОММЕРЧЕСКИЕ ОРГАНИЗАЦИИ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԿԵՏԻՆԳ, ԳՈՎԱԶԴ, ՓԻԱՐ / ИНФОРМАЦИЯ, МАРКЕТИНГ, РЕКЛАМА, ПИАР

(Հ) ՀԵՌՈՒՏԱԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ТЕЛЕКОМПАНИИ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ГОСУДАРСТВЕННЫЕ ОРГАНЫ И УЧРЕЖДЕНИЯ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ / ВЫСШИЕ ОРГАНЫ ВЛАСТИ

(Հ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ГОСУДАРСТВЕННЫЕ УПРАВЛЕНИЯ И ВЕДОМСТВА АРМЕНИИ

Ընդհանուր գործունեություն 1 տող/38 նիշ

Հեռուստածրագրերի պատրաստում և հեռարձակում

Изготовление и вещание телепрограмм

Ապրանքներ, ծառայություններ «Գործարար տեղեկատու» (ԳՏ) դասակարգչով 3

Ծառայություններ / Услуги

Աուդիո-, տեսա-, ֆոտո-, համակարգչային ծառայություններ, բջջային կոնտենտ ծառայություններ / Аудио-, видео-, фото-, компьютерные услуги, мобильные кон услуги

(Հ) Տեսածառայություններ. հեռուստածրագրերի ստեղծում / Видеоуслуги: создание телепрограмм

Տեղեկատվություն / Информация

Զանգվածային տեղեկատվության միջոցներ / Средства массовой информации

(Հ) Հեռուստածրագրերի արբանյակային հեռարձակում / Спутниковое вещание телепрограмм

(Հ) Հեռուստածրագրերի հեռարձակում / Вещание телепрограмм

Ռեգ.№ 3445

## Չտարածվող տեղեկություններ

Տպված է 22.09.14

ՆԱԽՈՐԴ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Պայմ.№ 281Գ150 (փաթ. Հիմնական) Կնքմ.ամս. 10.10.12 Պայմ.ժամկետը 10.10.12 – 10.10.14 Տեղեկագրքեր – 2013/A, 2014/E, 2014/A

Հավելյալ ծառայություններ. Լոգոտիպ, ԴԷ դասակարգիչ (1), Լոգոտիպի փոփոխում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

| Հիմք | Անուն-ազգանուն, պաշտոն | Հեռախոս (աշխ., բջջ.) | Էլ. փոստ (աշխ.) | Ընտրում |
|---|---|---|---|---|
| պայմ. | Աննա Ավանեսյան, մամուլի քարտուղար | (10)650015-247 | | |
| պայմ. | Գոհար Կարապետյան, գլխավոր մասնագետ | (10)650015-127 | | |
| պայմ. | Կարինե Հակոբյան, տնօրենի օգնական | (10)650015-101 | | |
| | | | | |

«Պատվիրատու» «Կատարող»

Կ.Տ. Կ.Տ.

ստորագրություն ստորագրություն

*Տեխնիկական գրառումներ (լրացնում է «Կատարողը»)*

| Գործառույթ | Ամսաթիվ | Աշխատողի տաբ. № | Ստորագրություն | Նշումներ | Գործառույթ | Ամսաթիվ | Աշխատողի տաբ. № | Ստորագրություն | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պայմանագրի հանձնում | | | | | Պայմանագրի մուտքագրում | | | | |
| Պայմանագրի ընդունում (կոմ.) | | | | | Պայմ. մուտքագրման ստուգում | | | | |
| Պայմանագրի ընդունում (ինֆ.) | | | | | | | | | |